

ներով (նոյն, էջ 321) և կ'ըսէ թէ «Ազարհն ուղարկեաց զամենայն վարդապետս եւ զեպիսկոպոստունս ի վիճակս իւր (նոյն)»:

Այս վարդապետներու շարքին մէջ էր նաև Գրիգոր վրդ. Կեսարացի, Սրապիոն Եդեսացիի գլխաւոր աշակերտը, որ այս առթիւ կը զրկուի Ամիդէն ուղղակի Կ. Պոլիս, հաւանօրէն 1601ի սկիզբները (Յաւն. Կեսարացի):

Գրիգոր վրդ. Կեսարացիի այս ժողովին մասնակցած ըլլալը միայն իր եղբօրօրդին է որ կը յիշէ, սակայն բնաւ անհաւանական չէ, քանի որ Դարանաղցի կը հաստատէ թէ Ազարիա հաւաքած էր «քաղուժ վարդապետս»: Այդ հաւաքուածներէն դուրս չէր կրնար մնալ Կեսարացին, որ արդէն կա՛մ Ամիդ էր իր ուսուցիչին մօտ, կա՛մ Կեսարիա դարձած էր և հոն կը պարապէր աշակերտներ հասցնելու:

Եթէ Ամիդ էր՝ ոչ մէկ տարակոյս թէ անիկա մասնակցեցաւ ժողովի և ժողովարարութեան յղուած վարդապետներէն մէկը եղաւ: Եթէ Կեսարիա էր, դարձեալ շատ հաւանական է որ Ազարիա զայն կանչած ըլլայ Ամիդ, քանի որ Կեսարիա վիճակ էր այն ատեն Կիլիկիոյ և իր վիճակին մէջ գտնուող այդ վարդապետը ապահովաբար չէր անտեսուած, մանաւանդ անոր Սրապիոնի հետ ունեցած կապը նկատի առնելով: